



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
ՈՐՈՇՈՒՄ

N 4 - Ա

22 հունվարի 2015 թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի, „Քաղաքացիական ծառայության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2002թ. օգոստոսի 1-ի N 40 որոշմամբ հաստատված „ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների մրցույթային և ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգի,, 9-րդ կետի պահանջները

*որոշում են՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի (64-3.1-17) թափուր պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների մրցույթային հանձնաժողովի կազմը՝ Միքայել Եղիազարյան/Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի վերահսկողության և վերլուծության գլխավոր մասնագետ/, Կարեն Բարսեղյան /Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի վերահսկողության և վերլուծության գլխավոր մասնագետ/, Սևակ Խլղաթյան /Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար/, Նորիկ Մաթևոսյան ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի վարիչ/, Լուսրա Մերթարյան /Գավառի թիվ 7 միջնակարգ դպրոցի տնօրեն/, Մելանյա Հովակիմյան /Գավառի թիվ 3 հիմնական դպրոցի տնօրեն/՝ ուսումնական և գիտական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

2. Մրցույթային հանձնաժողովի նախագահ նշանակել Միքայել Եղիազարյանին, քարտուղար՝ Կարեն Բարսեղյանին:

3. Հանձնաժողովի նախագահի և քարտուղարի լիազորությունները համարվում են դադարեցված ատեստավորման ավարտից հետո:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ